ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **01-ը մարտի 2024թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Վարդան Ավագյանը, Կարեն Մանասերյանը, Եղիշե Նազարյանը, Տիգրան Նազարյանը, Մուշեղ Ներսիսյանը, Գրիգոր Սարգսյանը, Ծովինար Սարգսյանը, Արմեն Վարդանյանը, Ռոմիկ Վարդանյանը և Վահե Վարդանյանը:

Նիստին մասնակցում էր Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով **ավագանին որոշեց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 1-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 1-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի բյուջեում վերաբաշխում կատարեու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20-Ա/

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ և 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով **ավագանին**
ո ր ո շ ե ց.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 03-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

Գործառնական դասակարգման 11.1.2 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից պակասեցնել 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ և այն ավելացնել 01.6.1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ոլորտի, տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում)հոդվածին՝ Եղեգնաձորի համայնքապետարանի քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերանորոգման աշխատանքների ֆինանսավորման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ն/

Ավագանու անդամներ

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՄԱՐԱՏ ՇԱՀԲԱՋՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը

_____